



## ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ՈՐՈՇՈՒՄ

02 նոյեմբերի 2020 թվականի թիվ 138-Ն

ք. Երևան

#### ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՌԻԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

#### 1. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2001 թվականի մայիսի 2-ի «Հեռուստառադիոընկերությունների վերալիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 7 որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2002 թվականի հունվարի 24-ի «Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակման լիցենզավորման մրցույթի կարգը հաստատելու մասին» N 4 որոշումը.

3) Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 15-ի «Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների չափորոշիչները հաստատելու մասին» N 1-Ն որոշումը.

4) Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 28-ի «Թվային հեռարձակման ցանցի միջոցով հեռուստաձրագրերի եթերային հեռարձակում իրականացնելու հեռուստաընկերությունների մրցույթի անցկացման կարգը հաստատելու մասին» N 23-Ն որոշումը.

5) Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2010 թվականի օգոստոսի 4-ի «Հեռուստառադիոձրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզավորման կարգը հաստատելու մասին» N 51-Ն որոշումը.

6) Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 13-ի «Մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 29-Ն որոշումը.

7) Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 28-ի «Թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոձրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» N 28-Ն որոշումը.

8) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 15-ի «Հանրային հեռուստատեսությամբ և ռադիոյով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կյանքի, մշակույթի, այդ թվում՝ իրենց լեզուների մասին հաղորդումների հեռարձակման համար տրամադրվող եթերային ժամանակի նվազագույն ժամաքանակները սահմանելու մասին» թիվ 50-Ն որոշումը.

9) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2018 թվականի հունիսի 15-ի «Հանրային հեռուստարձնկերության և հանրային ռադիոարձնկերության կողմից տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանության ապահովման վիճակի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնելու կարգը և հաշվետվության ձևը սահմանելու մասին» թիվ 51-Ն որոշումը.

10) Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2019 թվականի հունիսի 14-ի «Ռեզոնանսային կամ արտակարգ դրություն հայտարարելու ժամանակ հեռուստարձնկերությունների և ռադիոարձնկերությունների կողմից եթերաժամանակ հատկացնելու կարգը և պայմանները սահմանելու մասին» թիվ 61-Ն որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

**Տ. ՀԱԿՈԲՅԱՆ**

02 նոյեմբերի 2020թ.  
ք. Երևան